ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

29 հուլիսի 2026 թվականի թիվ 90-Ա

ք. Երևան

«ՌԱԴԻՈ ԱԼԻՔ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով «ՌԱԴԻՈ ԱԼԻՔ» ՍՊ ընկերության 2026 թվականի հուլիսի 20-ի՝ հեղինակազորման վկայագրի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է***.

1. Բավարարել դիմումը և ուժը կորցրած ճանաչել «ՌԱԴԻՈ ԱԼԻՔ» ՍՊ ընկերությանը 2025 թվականի հունիսի 2-ին տրամադրված ՀՎ № 072 հեղինակազորման վկայագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՌԱԴԻՈ ԱԼԻՔ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2026թ. հուլիսի 29
ք. Երևան